Քրիստոս, բազմաչարչար երկեամբք ծնունդք աւետարանաւն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի ըստ աղէտալից հայրական ջերմն սիրո մեր զոր ունիմք ի վերա ձեր՝ հանապազ դուք էք հոգ մեր ի Տէր, եթէ որպէս՝ կամ զիարդ էք ի ժամանակիս չար բերմանց ներքուստ և յարտաքուստ ներհակաց։ Զոր և աղաւթիւք հայցեմք յԱստուծոյ և ի մեր Սուրբ Լուսաւորչէն՝ պահել զձեզ խաղաղութեամբ՝ հոգւոյ և մարմնոյ, առողջութեամբ և ամենայն բարութեամբ։

Եւ այլ ծանիք, մեր ըստ հոգոյ որդիք, զոր երեկ առ մեզ մեր սիրեցեալ և պարծանաց որդիս պատուելի եպիսկոպոս ձեր՝ Տէր Յոհաննէս՝ Լովիդ. ի յողջոյն և ի համբոյր սուրբ աթոռոյս, եւ ի չնորհաւորել զմեր նըստիլս ի սուրբ աթոռս. և մեք զինք սիրով ընկալաք և հարկեւորեցաք. և եկեաց բազում աւուրք մի առ մեզ. Եւ ուղայորեցաք զՏէր Յոհաննէս արքեպիսկոպոս ձեր և զիւր եղբայրն ըզԳրիգոր աբեղայն, որ գնացին Աստուծոյ առաջնորդութեամբն զերկայնաձիգ ճանապարհն բազում աշխատանաւք ի յաստուածաբնակ մայրաքաղաքն ի յԵրուսաղէմ, ի տեսութիւն Սուրբ Յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և կատարեցին զիւրենց ուխտն. Եւ դարձեալ Տէր Յոհաննէս արքեպիսկոպոս յԵրուսաղէմայ և իւր եղբայրն Գրիգոր աբեղայն, և եկին առ մեզ։ Նայ եւս առաւել զինք և զիւր եղբայրն սիրով ընկալաք և հարկեւորեցաք. զի վայել էր Տէր Յոհաննէսի պատուելի արքեպիսկոպոսիդ ձեր՝ և իւր եղբաւրն՝ զինչ որ սէր առնէաք դոցա։ Զի մեր նախնեացն սիրած է և հարկեւորաց, և բարեկամ սուրբ աթոռոյս, և հրամանակատար որդի է։ Աստուծով և մեք հաճոյացաք ի բարիոք վարս և իմաստութիւնս սորա, որ է սուրբ և աղաւթարար, կարգապահ, և առաքինի եպիսկոպոս է և առա(տա)ձեռն։ Նայ որպէս մեր նախնիք՝ տէր Թէոդորոս և տէր Կարապետ կաթողիկոսն պարգևել էին ըզձեզ իւր թէմ և վիճակ, ըստ նըմին աւրինակի նոյնպէս և մեք պարգևեցաք մեր բարձր հրամանաւն՝ և աւրհնութեամբ գրովս, զԼովին իւր բոլ(որ)ովին երկրով Տէր Յոհաննէսի, դատիմի սեփական թէմ և վիճակ աթոռ և հանգըստեան տեղի, ի վերա ան սահմանին՝ զոր առաջին սուրբ և երջանիկ կաթողիկոսքն են հաստատել, որ ոչ ոք կարէ խորել ի Լովին երկրին թէմեն։ Եւ առաքեցաք գալ առ ձեզ՝ հրամա(յա)կան և աւրհնութեան գրովս մեր, խրատել և ուսուցանել զձեզ, գնալով յաւրէնս և ի պատուիրանս Տեառն Աստուծոյ՝ անարատութեամբ և սրբութեամբ, ըստ աւրէնի սուրբ և առաքելական եկեղեցոյս մեր. ի տուէ և ի գիշերի, և ոչ յաջ խոտորիլ և ոչ յահ(ե)ակ. Տալով զանձն աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ըզձեզ ուսուսցէ, սրբութեամբ, արդարութեամբ, երկեղիւ՝ սիրովն առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ, աղքատսիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որբոց և այրեաց, և ամենայն կարաւտելոց՝ կարեկից սիրովն Քրիստոսի։ Կոչեսցէ զարժանաւորսն և ըզվկայեալսն ի կարգ և յաստիճան կիսասարկաւագութեան, սարկավագութեան և քահանայութեան, եօթն աստիճանաւք։ Կալցի հրամա-